


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓՈՒՐ

Նամակ կամ ուր եւ քրոքիւն
աւեֆ է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՍԲՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ծաւց 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղումը հա-
մակ կամ այլ քրոքիւն եւ չի տրուիր :

ՕՏԱՐ ՄԱՍՈՒԼԸ

Թանկի Կ. Պոլսոյ թղթակիցը տխուր գոյ-
ներով ու կարեկից ոճով մը կը նկարագրէ
Թուրքիոյ հայերուն վիճակը որուն՝ կառավա-
րական ու ստորակարգական ծայրայեղ խտու-
թիւններու պատճառաւ սաստկանալը խտու-
մանաւ ատեն՝ միեւնոյն ատեն «գէշ նօթ»
մըն ալ կուտայ յեղափոխական յախուռն ա-
րարներուն : Բարիդեան մեծ թերթն իր ծա-
նօթ ուղղութենէն հրաժարելէն ի վեր, հայ-
կական խնդրին վրայ իր գրութիւններ կրնան
քիչ չափ անկողմնակալ նկատուիլ ու իրենց
նշանակութիւնն ունենալ :

«Հայերուն կացութիւնը յոռեգոյն է այ-
սօր, կըսէ, քան անցեալ դարնա՛ն : Այս ա-
մառ գործուած փորձը, Պապար Ալիի առջեւ
ուսմանը պայթումը չարակամ իշխանութիւն-
ներուն տեսակ մը իրաւունք տուաւ անվա-
տահութեան : Կ. Պոլսոյ բազմաթիւ և բիրտ
ստորակարգներ անկարող ըլլալով ձեռքը
դնել դեռ եւսանդուն յեղափոխականներու
բոյնին վրայ, յա՛յ և յահեակ կը ձերբակալէ
հանգարտաբարոյ վաճառականներ կամ ան-
մեղ էսմաւներ : Ոչ ոք կրնայ յայտնի հա-
մարձակ մայրաքաղաք մտնել կամ անկից դուրս
ելլել, եթէ հայ է, առանց երկարատեւ բան-
տարկութեան մը վտանգին ենթարկուելու՝
քննութեան պատրուակով : Ընդհակառակը,
անմաքուր խիղճով մը, յոռի նպատակներով
ու եւրոպական հազուադէպ՝ կարելի է միշտ
ծածկաբար ցամաք ելլել նաւահանգիստէն :
Գաւառներուն մէջ խտրու աղբիւրած է հա-
յերուն՝ տեղէ տեղ շրջապայլ :

«Ասի կը նշանակէ կործանումը երկրին
վաճառականութեան որով կապրի ժողովուր-
դեան մեծամասնութիւնը և մասնաւորապէս
հայ ազգը . ուստի անընդհատ արձագանգներ
կը հասնին մեղ այն սեւ թշուառութեան զոր
կը սաստկացունէ խտուաշունչ ձմեռը : Զանց
կրնեմ խօսիլ յաճախագէտ սպաննութիւննե-
րուն ինչպէս նաեւ Զէյթունի լքեալ վիճակին
վրայ որ պաշարուած է հալածութեան քիւրտերէ
և իւրիւքներէ՝ ամեն պատահականութեան
պատրաստ : Այս բոլորը չարագործներու սա-
կայն միջամտութիւնը յեղափոխական գոմի-
թիւներուն որոնցմէ ալեւս յուսահատները մի-
այն բան մը կը սպասեն, ստոյգ մահուան մը
համակերպողները : Ազգը որ կուզէ վերակեն-

դանանալ, իր բոլոր հոգւով կը վախճայ անոնց-
մէ ու կը մերժէ անոնց առաջարկները» :

Մեր կողմէ բան մը աւելցունել այս տո-
ղերուն վրայ՝ աւելորդ կրկնութիւն մը պիտի
ըլլար : Թանկի գրածները նոյնքան ճիշդ են ի
մասին հայերուն նկատմամբ թրքական հալա-
ծանքներուն որքան յեղափոխական փորձերու
կրկնութի պատահականութեան ազդին սղ-
գած երկրաշին : Զի մոռնանք որ եւրոպական
մամուլի լուրջ մասը, սկսելով անգլիականնե-
րէն, գլխիցէ նոյն յորդորը կուտան իբր եր-
կու տարիէ ի վեր, ոմանք կծու յոռետեսու-
թիւններով և ուրիշներ բարեացակամ չեչ-
տով մը :

Բարիպեան թերթին թղթակիցը շարու-
նակելով իր հայասէր տեսութիւնը, փափկու-
թեամբ կը զգացունէ թէ պէտք է որ օսմ.
կառավարութիւնը այլ եւս վերջ մը դնէ այն
խտուութիւններուն որոնց ենթարկուած է ամ-
բող ազգը՝ մէկ քանիններու արարքին պատ-
ճառով : «Հայերն այնքան բան ունին մոռնա-
լու . ինչո՞ւ ներողամտութեան օրինակը չի
տրուի անոնց» : Ակնարկութիւն արխանայի շար-
դերուն : «Դեռ վերջերս Սուլթանը իր դան-
ձէն 2000 սակի նուիրեց — կը շարունակէ—
Հայոց Պատրիարքարանին (գումար որ տմենէն
աւելի կարօտ գումարները զրկուած է) : Հա-
տուցումի պղտիկ սկզբնաւորութիւն մըն էր
այս : Բայց միեւնոյն ատեն չարտօնեց ընդհա-
նուր հանդանակութիւն մը զոր Պատրիարքա-
րանը կուզէր կատարել ազգին մէջ՝ դպրոց-
ներու, վանքերու և եկեղեցիներու վերաշինու-
թեան համար : Ասոր փութարէն Դրան կողմէ
յանձնաժողով մը կազմեցին որ տակաւին
ճամբայ չեւաւ, և եթէ ելլէ իսկ՝ օսմանեան
յանձնաժողով մըն է, աւա՛ղ, այսինքն վեր-
ջին յուղարկաւորն ստիպողական խնդրի մը
զոր թաղելու կերթան» :

Այս խորհրդածութիւններն արտասպա-
կ փութացին մանաւանդ անոր համար որ վար-
ժուած չէինք՝ ֆրոնտական նախարարութեան
բերան համարուող թերթին մէջ մեղի նը-
կատմամբ այսքան չեղոր ու անկողմնակալ
զրուածք մը կարգալու : Վարդապետն չէ իր
նկարագրութիւնն, իրա՛ւ . բայց կացութեան
մը ճշգրիտ արձագանգն է որուն հարադատու-
թենէն ու անկեղծութենէն կարելի է օգտուիլ
գիտնալու համար ինչ որ ընել պէտք է և ինչ
որ չընել : Խոհականութեան ու հանգարտու-

թեան պղտիկ դաս մը որ օտարէն գալուն
համար թերեւս աւելի ազդու ըլլայ և որ չու-
րանար բնաւ — նիւ Եօրֆ Հերցլի վարձկան
թղթակցին պէս — հայերուն կրած տառա-
պանքները, տուած զոհերը և գոհացումի ու
հատուցումի իրաւունք ունենալը . միայն թէ,
այս արդիւնքը ձեռք բերելու ճամբան՝ յե-
ղափոխական շարժումներու մէջ չի գտնուիր .
ընդհակառակը :

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՄԱՆ ՇՈՒՐՁԸ

«Իրազէկ» ստորագրութեամբ նամակ մը ստա-
ցած ենք որ ի հաստատութիւն խորէն Աշքեանի
հակամարդկային գաղափարներուն իւնախն ամուսնու-
թեան՝ անոր աղետաւոր Պատրիարքութեան օրով
սրտաւնդ գէպը մը կը պատէ, բազմաթիւ օրի-
նակներու մէջ մէկը միայն յիշեալ համար :

Վանի մէջ ամուսնացած հայ մը, տաճկալով՝
Երեւան կըլլայ թրքուհի մը հետ : Իր կնիք,
պարկեշտ ու մանկամարդ, որ անոր անօղակուն
միտքած էր էրկանը այս լքուած ու վատութեան
պատճառաւ, Պոլիս կուգայ, Պատրիարքարան կը
գլխի և ամուսնանալու հրաման կը խնդրէ : Կրօնա-
կան ժողովը, Վանի Առաջնորդարանէն ստուգել
տալէ ետք իրողութիւնը, արդար կը գտնէ կնոջ
խնդրերը և միաձայնութեամբ կորոյն ընդունիլ զայն
ու տեղեկագրել Եւփրատին : Աշքեան իր յախու-
նական զգոյր Աստուծոյ դուգեաց . . . յին կոթնած՝
կընդդիմանայ և կը յայտարարէ թէ ինք, իրեն նա-
խագահ, չի պիտի ստորագրէ այդ տեղեկագրելը : Ի
զուր Կրօնական ժողովի անդամները կը ջանան ա-
նոր դէմ հանել Առաքելական խօսքը թէ «որ ի հա-
ւատոյս ուրացեալ է, նա մեռեալ է», թէ հետե-
ւորաւ, այդ դժբաղդ կնիք որբեկայրի մը կը նկատ-
ուի : Հայաստանեայց Եկեղեցւոյ առջեւ, թէ ամուս-
նական նոր յարկ մը կապուած մեթոմը՝ կրնայ
յուսահատական կամ գայթակղական արարքի մը
մէջ զայն : Աշքեան կը յամառէր միշտ :

Այն ատեն, Վարչութեան վեղարաւոր կէսը կը
մտածէ թէ տասնըջորս եկեղեցականի վկայութիւնը
ու խնդրանքը կրնայ նոյն նշանակութիւնն ունենալ
յոյս կաթողիկոսին ու Սինոդին ինչ որ Պատրիար-
քինը — քանի որ խնդիրը զուտ կրօնական էր և ըլ-
լալիք գիտումն ալ Մայր Աթոռին կը վերաբերէր և
ոչ թէ . . . Դրանու Ու կորոյն իրենք ստորագրել
տեղեկագրելը և խրկել, այնքան խիղճներուն զպած
էր Վանեցի հայուհիին վիճակը :

Աշքեանի տապալումը առաջ բերող դէպքերը
վրայ կը հասնին ճիշդ այն օրերուն մէջ, և Կրօնա-
կան ժողովն ալ կը քաշուի, առանց ժամանակ ու-
նենալու իր մարդասիրական ու քրիստոնէական այս
որոշումը գործադրելու : Անշուշտ, կաւեցունէ Վրա-
ղէկ, երբ Պատրիարքարանի գործառնութիւնները
վերականգնելու քիչ ետք ու ժողովները վերակազմուե-
ցան, այդ կնոջ խնդիրն ալ նկատողութեան առ-
նուեցաւ իր կարգին ու գրուեցաւ Եւփրատին, վասն
զի Արաբասի Սինոդական որոշումներու շարքին մէջ
բանիցս կարգացինք՝ Հայրիկի գահակալութենէն ի
վեր՝ հաւատաւորներուն ամուսնոյն տրուած օրինու-
ւոր հրամաններ կրկին կարգուեցաւ : Բայց այս դէպք
մին է այն ընտանեկան տխուր տառապանքն որոնք
անիրաւարար կը ճնշուին ու կը ծածկուին Պատ-
րիարքարանի մութ անկիւններուն մէջ : Աշքեանի
օրով, առանց զիսկ թեան որ և է զգացումի լքուած
կրկնութեան արցունքին՝ իսկ խաբուած կրկնութեան
զրգին :

ՊԶՏԻԿ ԷԶԵՐ

ԱԼՖՈՆՍ ՏՕՏԷ

—Երբ նորէն Բարիզ գալու ըլլաք՝ եկէք զիս տեսնել, եթէ մինչեւ այն ատեն մեռած չըլլամ . . .

Պատրանք չունէր խեղճ վարպետը . իր Գաւին համակերպած՝ զընկ զլիս կապրէր այնչաւ մահու ուրուականին հետ . . .

Հայրենայ ջիւերու ծրար մը մնացեր էր Վսեմ հիւանդը երբ ԳԶին ամառը գրական ուստազնացու թիւն մը կատարեցի իր մօտ, Բարիզ, իր Ռիւ սը պէլ տաքի խաղաղիկ աբբարքմաններուն մէջ։ Գրական կուռքս եղած էր Տօտէն այն տարիքիս մէջ ուր սիրտդ թարմ է և արցունքդ հեղատահ։

Անձա՛ն վայելքի ժամը զոր ասորեցայ վարպետին հետ . . . օր մը պատմեմ ձեզի թերեւս էջերու մէջ որ պզտիկ չեն կրնար մնալ։ Ա՛խ, մագի՛չ խօսակցիւր . . . իր խօսակցութիւնը նկարուն, ջերմ, թրթռուն՝ իր գրքերուն գրականութիւնն իսկ էր, խօսուած, կենդանի, խօսքի հրախաղութիւն մը, որ նշալիւ ընծէ մը կակտի, կը սուրայ, կը տարածուի ու մէկէն՝ հրեղէն փունջ մը, լուսոյ գեղխաւթիւն մը կը ժայթքէ շէպեալ աչքերուդ առջեւ։ Յափշտակութեւ ի, չէի խօսեր ես, ինձմէ հետեւէն հետու բառ մը՝ և ահա բառս պատրուակ կըլլար որ պոռթկար իր արամտութեան և զգայնութեան ծորակը։ զիտե՞ր էք, ինչպէ՛ս առանց դպչելու ալ, կը թրթռան տաւիղի մը թելերը երբ մեղրիկ հով մը գգուէ դայն։ Այն յիշատակներս է զոր խանդոտ ցնցումով մը պիտի յիշեմ՝ միշտ, անոնցմէ՝ որ կեանքի միադայն ժապաւէնին վրայ օսկեզօծ կէտեր կը դնեն։

Իր կաթուածոտ ոտքերուն և գառապանին կազմած եռոտանիին վրայ քաշքշելով ինքզինք՝ մինչև գրասեղանը յառաջացաւ, իր վէպերէն մին ընծալով իր «confère»ին, խոնարհ մարդը, երկու սիրալիք տողերով, ալ տեսակ մը աշխարհական մասունք ինծի համար։

* * *

Նիւմէն եկեր էր ինքը իր մեծաներուն գառառի փոշին թոթովելու Բարիզի մայիկներուն վրայ . ատեն մը ետքը Մօսկի դքսին բով կը մտնէր, իրր անձնական բարտուղար։

Երբեք պատմելու ինչ սիրուն եղանակ մը ունիս, ա՛խ, եթէ փորձէիր գրել . . . քանի էին իրեն ու le petit, choseը (սա սլոգանը, սլոկա) —ինչ պէս կանուանէին զինք դպրոցին մէջ, իր անունը սորվելու ձանձրոյթը չառնելով — արտադրեց հետդհետէ արուեստագէտի գեղեցիկ շունչով մը, — եւ դաք փորձեցէք մէկ շնչէ հատրել, կաղաչեմ — երեսուն գործեր, Փառքի մէյմէկ անցագրեր։

ձեքի արցունքը լայեր եմ իր հետ և իր ծաղրը խնդացեր Թաութաճեններուն վրայ . զի խանդաղատանքի այս մեծ բանաստեղծը ամենէն նուրբ երգիծողն էր նաեւ։ Իր կարծատեսի աչքերը կը տեսնէին ինչ որ մանրամասն չը ցուցներ, իր զըրուադալի ոճը՝ իր գեղեցիկ ու մեծ տաղանդին զմուռն ունէր, ու իր արուեստագէտի հոգին նոյն իսկ իրմէ նմանութիւն մը փոխ առնելով, տփի մը մէջ սքովո Վալտիկի ալպոմն էր որուն տակ այլազան պատկերներու բանօրամա մը ծաղրածալ կը բացուի, կերկրարի։

Իր անաղար դիտողութիւնները մարդոց և իրաց վրայ, գերազանցապէս խկատիպ, անձնական ոճը, պատմոյի անրադաշտելի հրապոյրը, զեղուն, տաւրախիկ խանդաղատանքը, սայրասուր հեղինութիւնը, բանաստեղծութեան իր գողտը չլարչը, իր րականին խորին ըմբռնումը, և անոր հրաշալի վերջուշումը, ահաւասիկ գրական թանկագին յատկութիւններ զոր (բարի պարիկը) հաղուադիւտ ընդդրութեան մը մէջ ծրարեր զգրեր էր իր օրօրոցին մէջ։

Քի՛չ է, չեմ գիտեր . . . իոյց գրական նորահաս սերունդ մը, Վերջին շրջանումով ճամբայ ելնող գրող գէտներ, իրենք աւելի մտադիր իմաստասիրական մասմանակակից յոգնայոյզ խնդիրներու, աւելի գիտակից ընկերութեան խաղ ըզձանքներուն, և հետեւապէս ի խնդիր, հետամուտ աւելի հիւթել, աւելի խորիմաստ գրականութեան մը՝ ընչ մը նեղփոտ կը գտնեն այսօր Վարպետին իմաստասիրութիւնը և իր գրականութիւնը պակասարին։

Մտածենք Տիւմայի հետ որ «Այսօրուան երկ»

տաաարդութիւնը չնորհակալ ըլլալ չը գիտեր։

Մեծ արուեստագէտը զոր վարպետնեւ ուղեցին իր պատուանդանէն — և զոր վաղը մարմարինէ պիտի կանգնեն Ֆլապէսին և Կօնքուսներուն մահարձաններուն քով, — գեռ քանի մը շարաթ իսկ առաջ՝ Փառքի իր Վերջին բաժակը՝ բաղկեց Մաքընէի հետ։ Գրականութեան և երաժշտութեան բուռն զրկախառնութիւնը եղաւ Սաֆօն Օրէնու-քովի մէջ, աւոնոյ տարիաւոր կալչումը՝ կալչումի այդ աղի արտաժութեան մէջ։

Յաւագին կրբի, հոծ յաղմուքի, սիրոյ ու տառապանքի այդ բանաստեղծութիւնը — որ Տօտէ իր երկրասարդութեան թուր անձկութիւնները ու բոլոր վէրքերը դիւած էր Մաքընէի ներշնչեց իր քնարերգական ամենէն անկեղծ, ամենէն խորունկ և ամենէն մարդկային շեշտերը։

«Ա՛խ իմ կեանքս է աստիկ . . .» գոչեր էր նուազած ու մը հեկեկալով Սաֆօյի փորձերուն միջոցին։ Եւ սակայն blasé ըլլալու եւ այդ մարդիկը՝ յաւիտենական գառաւած թատերարեմին առջին։

Ատենին կը մեռնի Վարպետը, բուռն յաղմուքի վերջին ցնցում՝ մը նետելով Բարիզի մէջ, իր նորագոյն յաղթանակին շեփոյններուն վերջին խաղերը դեռ չը մարած։

«Չանայէք փառաւոր թաղում մը ունենալ» և Նիւի Le petit, choseը որ sabotով եկած էր Բարիզայն վայրկեանն ուր կը դրեմ այս քանի մը արագ տողերս, կուենայ այն թաղանթներէն մին որ բարդեղան դէպք մըն է։

Պիտի ուղէի որ Պիթօվլնի մահերգին տեղ Սաֆօյի վերջին արարուածին մեղեդին երգէին իր յաղարկաւորութեանը։ Աւրօր թաղում մը պիտի ըլլար աստիկ։

Յարգանքի յաղեալ խոնարհութիւն մը դադարիդ առջեւ, հէգ և սիրելի՛ վարպետ։

Բունդ անոյշ պիտի ըլլայ հատորներուդ կազմած հսկայ բարձին վրայ . . .

ԱՆՑՈՐԴ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳԻՏ

Ձեկք գիտէր որո՛ւ վերագրէր այս նոր գիտին հեղինակութեան պատիւը, Պոլսոյ Հագիգաթի՞ն քէ Բարիզի Ժուռնալին, վասնզի այնպիսի ինքնաստեղծ ու եզակի նորութիւն մըն է որ կարծէ իրարմէ խելշտեղ կը կասկածուի, քերթերէն սուա՞ք՝ բուրբերուն ու անոնց բարեկամ դիւանագէտներուն վառ երեսկայութեանը մէջ։

Շատնց ի վեր վարժուած էինք Հայ Աւազակներ վերնագրին սակ կարգ մը հրասարակութիւններ կարդալու Պոլսոյ յրազիրներուն կես-պաշտօնական բաժնին մէջ, որոնք միեւնոյն ասեւ կը հեռագրուէին Եւրոպա. եկաւ ասեւ մը սակայն ուր «աւազակ» բառը անբաւական զսան հայերուն համար, ու անոր տեղ սկսան գործածել «անարշխար»։ Բայց այս մակդիրներ կրնայի՞ն արդարացունել գաւառներու մէջ գործուած խնդրութիւնները։ Նոր նոխազ փառքեան մը պէտք էր, անոր վրայ հրաշխեշտ համար փառքեան աշխարհին ուշադրութիւնը, եւ ահա՛ հնարուեցաւ «Ամերիկացի Աւազակներ» բացատրութիւնը՝ միսիոնարներուն ու միսիոնարներին համար, զորս վստել կուգէն. ճշմարիտ գիտէ մը չէ՞։

Կարծել չի տալու համար քէ «Այժմեան» քիւնի՞ն սակ fantaisie մը մարտել տալ կուգէն, պիտի արտասպէնք փակի մը տղեր։

Ամերիկացի աւազակները օսմանեան գիւ-

ղերու վրայ յարձակելէ յետոյ Պարսկաստան փախած են։ Այս աւազակներ սոսկալի խրժ-գըծութիւններ գործեցին։ Դէպքին պատահած տեղին մօտ ամերիկացի միսիոնարուհի մը ձերբակալուել է և վրայէն փամփուշտներ գտնուել են։ Այդ կին աւազակութեան համար պիտի գործածէր այս փամփուշտները։

Գոնէ կիներուն ու տղաներուն ինքնայնիւ. բայց այն ասեւ գիտէր իր կասարեւազորութեան չի պիտի հասներ. կարգը կուգայ որեւմէ միսիոնարներու հսկողութեան սակ զսնուած դպրոցներուն որոնք փոշ եղած են սահիկներու ալիւն. զսնուած ալ արտատրեշտ էր. եւ ահա՛ քէ ինչ կը հրասարակեն։

Միսիոնարուհին նոյն տեղին մօտ վարժարան մ'ունի որուն աշակերտաց դպաններէն ալ փամփուշտներ գտնուած են. ասոնք յայտարարել են թէ իրենց ուսուցչին հրամանատարութեան տակ լրատուութիւն կընէին աւազակայ։

Հագիգաթ-Ժուռնալ միաժայն կը յայտարարեն քէ այս տեղեկութիւնք մեծ զարմանք էր յոգում պատճառներ են ամերիկացիներուն։

Միևակ անոնց . . .

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Երկու նոր զոհեր ալ։

Պոլսոյ եղեռնադատ ատենը մշտնջենալան բերդաղբելութեան դատապարտել է Անիի անուն մանկամարդ հայ աղջիկ մը որ վերջին օգոստոսի դէպքերուն առթիւ ձերբակալուած էր Բերայի մէջ՝ գետապանատունները յեղափոխական շրջաբերականներ ցրուելու ամբաստանութեամբ։ Ի՞նչեւ արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշա խօսաւացած էր դեսպաններուն, որոնք միջամտած էին ի նպատակ այդ տարաբաղդ աղջկան, թէ դատի չի պիտի ենթարկուի, բայց այս խոստում չէ յարգուել։ Ամբաստանեալին յանցաւորութիւնը ապացուցանող ո՛չ մէկ ապացոյց չէ գտնուել, բայց ի նըշակ անուն տղու մը վկայութենէն որ բանտին մէջ չարչարանքի ենթարկուած էր։ Այս անգամ, — կաւեցունեն եւրոպական թերթերը — գետապանները բողբոս ըլլալով դատարանի վճռին դէմ, Գուռը պատասխանել է թէ տերութեան ապահովութեան տեսակէտով՝ պարզ կասկած մըն ալ կը բաւէ։

Միւսնոյն վճռով, մշտնջենական բերդաղբելութեան դատապարտուել է նաեւ Պօլոս անուն երիտասարդ մը։

— Մոռցուած չեն անշուշտ Պէրլինի օսմանալիք գետապան Ղալիպ պէյի արկածները, որ երկար ատեն ամսական տալացած չըլլալով ու պարտքի տակ ընկճուած, առանց արտօնութեան ելաւ Պոլիս դնաց, պաշտօնանկ ըլլալն աչքը առնելով։ Կը ծանուցուի այժմ թէ Ղալիպ պէյ գերմանական նոր գետապան Պ. Փօն Մարշալին գիմեր է որ բարեխօսել է Սուլթանին մօտ՝ զայն նորէն պաշտօնի մը կոչել տալու և պահանջները վճարուելու համար։ Աւերել է ըսել թէ այս դիմումն ընդունուել է։

— Հելլեն կառավարութիւնը երրորդ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խախի վր Երկու երեք օրէ ի վեր Մոնթաղա՛հ կը գտնուէր, երեքշաբթի իրիկուն Գահիրէ վերադարձաւ :

—Պ.Հարրիսըն՝ամերիկեան նորընտիր գործակատարը իր պաշտօնագրերը ներկայացնելու համար Խախի վր կողմէ պաշտօնապէս պիտի ընդունուի վաղը առաւօտ ժամը 10ին :

Մեծ հանդէսով պիտի կատարուի այս ընդունելութիւնը . պաշտօնական կառքեր զինքը բնակարանէն առնելով պիտի տանին Ապտինի պալատը ուր հասնելուն , ըստ սովորականին , թնթամիտի հարուածներով պիտի ողջունուի :

—Նախարարաց խորհուրդը վաղը իր շաբաթական նիստը պիտի ընէ Ապտինի պալատին մէջ ընդ նախագահութեամբ Խախի :

—Խախի վր անձին դէմ անարդիչ հրատարակութիւններու համար ամբաստանուած Սայիֆ անուն տետրակին հեղինակները՝Ահմէտ Փուաւա և Շէյխ Էլ Մանֆաւլի , տեղական վճարակ ատենին կողմէ վեց վեց ամսուան բանտարկութեան դատապարտուեցան :

—Սէրտար Քիշէր փաշա երէկ Ասուանէն մեկնելու է դէպի Պէրպէր :

—Բարձր. Խախի վր մայրը քանի մը օր մնալու համար երէկ Մոնթաղա՛հ գնաց մասնաւոր կառավարմով :

—Պ.Ռապու, հեղինական ընդհ. հիւպատոսարանին նախկին արկղակալը որ 80,000 ֆր. իւրացուցած ըլլալուն համար ամբաստանութեան առկա կը գտնուէր , Ալեքսանդրիոյ հիւպատոսական դատարանին կողմէ երկուք ու կէս տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ : Խղճամիտ արկղակալը գրեթէ 15 ամիս ի վեր բանտարկուած ըլլալով՝ իր պատիժին կէսը արդէն կրած է և հիմա այնքան եւս պիտի մնայ հոն՝այս արկածախից կեանքին իմաստասիրութեամբ զբաղելու համար :

—Գաղտնի նախարարութիւնը հրամայել է ձեռնհաս իշխանութեան՝ դատ բանալ արաբական էջրայ-էջրայ կիսամիտայ թերթին դէմ որուն մէջ խտրական գերդաստանին դէմ վիրաւորիչ ակնարկութիւններ հրատարակուած էին , Բույեէ պէյի մահուան առթիւ :

—Բարձր. Խախի վր տարեկան պարահանդէսը տեղի պիտի ունենայ յունուար 14ի գիշերը , Ապտինի պալատին մէջ :

Երէկ հաճոյքով այցելեցինք Տիար Հ. Փափագեանի գործատեղին ուր կը պատրաստուին շապիկներ արանց համար և շքեղեքներ կիններու յատուկ : Պոլսոյ մէջ իր ունեցած համարը արդէն գրուական մըն էր այն յաջողութեան զոր գտաւ Գուհիրէի մէջ : Քաղաքին բարձր գասը , ճաշակի տէր և միևնույն ատեն դժուարահաճ ու շիք երկտասարգութիւնը գնահատելով Տիար Փափագեանի շապիկ գործութեան մէջ ունեցած հեղինակութիւնը , իրենց commandeներով կողովին այդ գործատեղին ուրիշ եղած ամեն մէկ շապիկ բարեկեան մասնաւոր cachet մը կը կրէ :

Պուրթի ճամբուն վրայ և եգիպտական հեռագրատան դէմ գտնուող Տիար Հ. Փափագեանի փառաբանութեամբ ուղեւորական elegant աշխարհին ժամադրաւարը ըլլալու որոշուած է , յաջողութիւն մը որուն համար կը շնորհաւորենք հայագի շապիկ գործը :

Ա. Մայիս և բնկերութեան հանդերձեղինաց Գահիրէի ճիւղը հետեւեալները զրկած է Սուլթանը . Գարան՝ աղքատ գաղթականներու բաժնուելու համար . 4 ժաֆէր կնա՝ համար , 5 բալթօ , 14 գլխարկ և 2 յայ :

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

1898 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փաւա ողջ :

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ⁽¹⁾

Եթէ մարդկային հոգւոյն մէջ եղող բանաստեղծական մասը արձակուանակէն որոշելու համար , մանկութենէ սկսելով մինչեւ զառամ հասակը , տգիտութենէն սկսելով մինչեւ գիտութիւն , անտարբերութենէ սկսելով մինչեւ կիլքը , անոր բովանդակ առաւելանալարը պըրպտենք , միշտ պիտի տեսնենք որ մարդուն մէջ բանաստեղծութեան ճշմարիտ չափը յուզմունքն է . պիտի տեսնենք որ սէրը աւելի բանաստեղծական է քան թէ անտարբերութիւնը , թէ վիշտը աւելի բանաստեղծական է քան թէ երջանկութիւնը , թէ բարեպաշտութիւնը աւելի բանաստեղծական է քան թէ անաստեղծութիւնը , թէ ճշմարտութիւնը աւելի բանաստեղծական է քան թէ ստույգութիւնը և թէ վերջապէս , թէ՛ հայրենանուէր հանրային մարդուն , թէ՛ ընտանեացը անձնանուէր առանին մարդուն , թէ՛ աղքատանոցներու և հիւանդանոցներու աղախին եղող և տառապեալ էակին մէջ իր անձը Աստուծոյ նուիրող խոնարհ կնա՝ համար՝ առաքինութիւնը աւելի բանաստեղծական է քան թէ եսականութիւնը կամ մարդկութիւնը , վասնզի ստուգապէս առաքինութիւնը յուզումներուն թէ՛ ամենէն զօրուորն է և թէ՛ ամենէն աստուածայինը :

* * *

Ահա ասոր համար է որ ճշմարիտ բանաստեղծները ճշմարտութիւնն ու առաքինութիւնը կ'երգեն , մինչդեռ ստորին բանաստեղծները կ'երգեն սովորեքն (իմաստակութիւն) ու մարդկութիւնը : Յոռութեան այդ քերթողները իրենց գործերը չճանցող չափոված երաժիշտներ են : Սխալ և կարճ ըզրը կը հնչեցնեն փոխանակ ճշմարիտ ու յաւիտենական լարին : Նոյն իսկ իրենց փառքին համար՝ սխալ է ըրածնին : Ննթաղերով որ տաղանդով հաւասար ըլլան , բարեղն և զեղեցիկն յուզման հանած ձայնը աւելի անոյշ է և աւելի հնչական քան թէ այն հնչիւնը զոր կը հանեն մարդուն թեթեւ կամ վատթար կիլքերէն . բանաստեղծութեան մը մէջ որչափ աւելի ըլլայ Աստուած , այնչափ աւելի կ'ըլլայ բանաստեղծութիւն , վասնզի դերագոյն բանաստեղծութիւնը Աստուած է :

* * *

Երբ մանուկ էինք , փառքիկ քղերես ու ես խաղ մը կը խաղայինք , խաղ մը որուն անունը հրեշտակներու երաժշտութիւն գրած էինք : Այս խաղը կազմակերպելու համար ,

(1) Այս գրական գործին թարգմանութիւնը կը ձօնենք այն խեղ ու խելօք գրագէտներուն ուրոյ իրենց ախմար և անհամ գրութիւններով մեր դարակները կը խճոգեն :

Լաւարդինի այս գրութեան ընթերցանութիւնը կրնայ օգտակար ըլլալ իրենց :

պատուիրակ մը ճամբայ հաներ է ի Կ. Պոլիս : Այս պատուիրակ , Պ. Տուրութիս , Մալթոօլօ տաթօ իշխանին ու Պ. Սթէֆանուի հետ պիտի միանայ բանակցելու համար այն կարգ մը պայմանագիրներու մասին որոնք սիրտի կնքուին Յունաստանի և Թուրքիոյ միջեւ՝ հաշտութեան վերջնական դաշնագրին կնքման հետեւանօր :

—Միւսնի Սէֆօղ լրագիրը որ sensationel ու մաաջածին լուրեր հրապարակ նետելու մասնագիտութիւնն ունի , կը հաղորդէ թէ թուրք ոստիկանութիւնը «կը կարծէ գտած ըլլալ»՝ Ղալաթիոյ արձարանի մը մէջ դաւադրութիւն մը որուն նպատակն է եղեր քանի մը պանքաներ օդը հանել ակնամթիւ միջոցաւ : Երեսուն հայեր ձերբակալուելու տանջանքի ենթարկուելու են՝ իրենց վերագրուած խորհուրդը խոտովանելու համար :

Այս տիկամթիւական լուր կ'ամ իտալերէն թերթին երեւակայութեան ծնունդն ըլլալու է և կամ թուրք ոստիկաններուն մէկ հնարամտութիւնը , այնքան անհաւատալի կը թուի որ ուժանակի փորձը կրկնել ուղղութիւն գտնուին դեռ :

—Գարձեալ իտալական թերթերուն տեղեկութեանց նայելով , պաշտական պաշտօնատարներ ու սպաներ բռնուել են ելքեր՝ ժէօն-Թիւրքի կուսակցութեան վերագրուած ենթադրական դաւադրութեան մը հետեւանօր :

—Թալմզին Կ. Պոլսոյ թղթակիցը կիմանայ թէ կառավարութիւնը հարկադրուել է հրաժարիլ Պանք Օթօմանէն կանխավճար մը ստանալու պահանջումէն , ի հաշիւ Յունաստանի վճարելիք պատերազմական տուգանքին : Մալթիէն նոր բանակցութիւններ կը կատարէ յիշեալ դրամատան հետ , 200,000 ոսկիի փոխառութիւն մը կնքելու համար , ոչխորի տուրքը երաշխաւորութիւն տալով :

—Տեղի Թէրեկրա՛մին Վիէնայի թղթակիցը կը հեռագրէ թէ Դուռը ձերբակալել և Պոլիս փոխադրել տուել է երկու աղանդայի երեւելիներ սրտը մասնակից էին ապստամբական շարժումին :

Միւս կողմէ , Չէթինէէ առնուած լուրերու նայելով , Ալպանիոյ Միրաթի կաթողիկէնութուն մէջ յուզումը կաւեղնայ և անոնց եպիսկոպոսը յիշատակալի մը ուղղել է Պապին՝ իր հօտին քաջած աստուապանքները պարզելով : Գարատաղի իշխանապետութիւնը զօրք կը համախմբէ Բօսֆորիճայի մօտ , Արնաւուտներուն կողմէ յարձակումէ մը վախճալով :

—Կրէտէի ընդհանուր ժողովը ձեռնարկներ ընել տուել է Կ. Պոլսոյ զեապաններուն մօտ , որպէսզի Սամուի Սահմանադրութիւնը հիմ բռնուի իրենց կղզիին տրուելիք ինքնօրինութեան :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Օրմանեան Պատրիարքը՝ Աղգ. Վարչութեան հետ համախորհուրդ , պաշտօնական ձեռնարկներ կ'ընէ այս միջոցիս՝ հայ գաղթականաց ի Կ. Պոլիս վերադարձը դիւրացնող կառավարական արտօնութիւն ձեռք բերելու համար :

ողորի ձաղկ մը կիսադարձակի կամ շատ սրան-
կին աղեղի ձեւով կը ծռէինք, անոր ծայրե-
րը իրարու կը մօտեցնէինք նեւը կը լրջնայինք
լարին նման թելով մը, յետոյ անհաւասար
մեծութեամբ մաշեր կը կապէինք աղեղին
երկու կողմերուն՝ ինչպէս որ կը յարգարեն
տաւիդի մը թելերը, և այդ փոքրիկ տաւիդը
կը դնէինք հովին: Ամբան հովը որ խօշական
շնչով մը մերթ կը հանգչի՝ մերթ կը շնչէ, կը
սարսռեցնէր եղջեր և եղեւիններուն ժանե-
կալերը աղեղներէն հանածին պէս գրեթէ
աննշմարելի նրբութեամբ հնչեւներ կը հանէր
անկէ: Կարգաւ ականջ կը դնէինք, և կերե-
ւակայէինք որ երկնային ոգիներն էին որ կեր-
գէին: Սովորաբար, քոյրերուս առկախեալ
հիւսքերէն կտրուած բարակ, ճիւղ, խարտեաշ
ու կակուղ երկայն մաշեր կը գործածէինք
այդ խաղին համար. բայց որ մը փորձ մը ը-
նել ուղեղինք գիտնալու համար թէ արդեօք
հրեշտակները ուրիշ տարիքի մը վերաբերող,
ուրիշ ճակատէ մը առնուած լարերու վրայ
միեւնոյն մեղեդիները պիտի նուագէին: Հօրս
մէկ աշնիւ հօրաքոյրը, որ տանը մէջ կը բնա-
կէր, և որուն մաշերը կանխահաս կերպով
ճերմկած էին Terreurs թուականին բանտե-
րէն, հակողութիւն կընէր մեր զբօսանքներուն
պարտէզին մէջ մեր մօտերը ասեղնազօրծերով:
Յարմարեցաւ մեր տղայամիտ կամքին և իր
մաղերուն մէկ երկայն ծամը մկրատով կրտ-
րելով մեզի յանձնեց: Անով ուրիշ տաւիդ մը
յօրինեցինք, և առաջինին քով դնելով, ա-
կանջ դրինք երկուքին ալ երգելուն: Այդ,
կամ վասնզի թելերը այնչափ պիտի չէին, կամ
վասնզի աւելի առածիգ և հեծեծազին տե-
սակէ էին, կամ անոր համար որ հովը փոքրիկ
տաւիդներէն մէկուն վրայ աւելի անուշ և ուժ-
գին կը շնչէր քան թէ միւսին վրայ, զգայինք
որ օգային ոգիները ճերմակ մաղերուն մէջ,
աւելի տխուր ու աւելի ներդաշնակ կերգէին-
քան թէ մանկական խարտեաշ մաղերուն մէջ.
ու այն օրէն յետոյ, շատ անգամ մեր մեծ
հօրաքոյրը գլուխը կը տանէինք որպէս զի թող
տար որ մեր ձեռքովը իր գեղեցիկ ճակտէն
մաղ բրցունէինք:

* * *

Այդ երկու տաւիդները որոնց լարերը ի-
րենց թելերուն տարիքին համեմատ տար-
բեր ձայներ կը հանեն, ձայներ որ սա-
կայն նոյնչափ ներդաշնակ ու անուշ են այդ
կենդանի լարերուն թէ՛ սպիտակ և թէ՛ խարտ-
եաշ լարաշարերուն մէջ, այդ երկու տաւիդ-
ները մարդուս երկու հասակներուն յատուկ
և սեպհատկան եղող կրկին բանաստեղծու-
թեանց տղայական, այլ ճշգրտաաւիտ պատ-
կերը չէ՞ն միթէ:

Երիտասարդութեան մէջ անուրջ և ու-
րախութիւն. ծերութեան հասակին մէջ՝ երդ-
ու բարեպաշտութիւն. ողջո՞յն մը և հրաժեշտ
մը՝ տրուած կեանքին և բնութեան, բայց հրա-
ժեշտ մը որ ողջոյն ալ է. աւելի խանդավառ,
աւելի հանգիստաւոր և աւելի սուրբ ողջոյն մը
մատուցուած Աստուծոյ տեսեանը, որ ուշ կը
ծագի, բայց որ կը ծագի, աւելի յայտնի ու
ակներեւ մարդկային կենաց երեկոյն հորի-
զոնին վրայ:

Ա. ՏԸ ԼԱՄԱՐԹԻՆ

PHARMACIE DE LA POSTE
ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախող-
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-
րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով:
Դեղադրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ:
Թարմ հաճախից ջուրեր, անուսահոսութիւն և և.
Բնաւորական և մանրադիտական քննութիւն:
Դեղարան կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նոթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք ազատաց
համար: 12—50

Ս. ԹԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԱՔԱՆԴՐԻԱ, 3 ԹԵՎԻԳ՝ ՎԱՇԱՎՈՂ

ՏԱՆՈՒՆ ՎԱՃԱՌԱՍԱՆ ԴԵՄ

Կերպասներու զանազանութեամբ ու ըն-
տրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելու-
թեամբ այս տան դիմող յաճախողները գոհ
պիտի մնան թէ պատրաստուած հագուստ-
ներէն և թէ գիներու չափաւորութենէն:
Դիւրամատչելի պայմաններ: 2—4

ՏՕՔԹՕՐ Կ. ՃԵՐԱՀԵԱՆ

Տօրթօր Կ. Ճերահեան այս անգամ Գահիրէ
հաստատուած ըլլալով, իրեն դիմող հիւանդները պի-
տի ընդունի իր բնակարանին մէջ Եւրոպական Գրեթ-Պէյ
թիւ 2 (ժուրը՝ Աթ Գրեթ-Իւլ-Կինէն) տան օր,
բացի կիրակիներէ, առաւօտէն մինչեւ ժամը 3(Յ.Մ.)
իսկ ժամը 3էն մինչեւ 5 կարելի է զինքը գտնել
Արարատ դեղարանը ի Պէյ-Սուրէն, և 5էն 7 էօդ-
պէքէի վրայ ֆարմաի տը լա Պուրս դեղարանը:
6—8



ՃԵՐԱՀԵԱՆ ԵՒ ԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Յ Ե

ԼԵՍԱՎՍԻՍԻ ԺԵՆԵՆ

Մալիի և ժամանակի խնայողու-
թիւն. — Մաքուրեան կատարողագոր-
ծութիւն. — Արագութիւն և դիւրութիւն. — Ճերմակե-
ղեցներու և այլոց հակամեխում:

ԿԱՐԵՒՈՐ. ԼԵՍԱՎՍԻՍԻ ԺԵՆԵՆ ԶԻ ՄԱՇԵՆՆԵՐ

Եւրոպայի և Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիւ
սաւեկան սպառում. — Գործածութեան կեդրը խիս
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ցերեկայացուցիչ յեղիպսոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դանիք. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 20—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երազի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԵՐԹԵԿԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍՆԴՐԻՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ս Ր Ա Ն Գ	Խառն 1,2,3 կգ.	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմ Նիւյ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Թանիս	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղէ բսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԹ

Կ Ա Յ Ս Ր Ա Ն Գ	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմ Նիւյ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմ Նիւյ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանիս	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅՍՐԱՆՔ	ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅՍՐԱՆՔ	ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէշ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	Խամաիլիա	» 1 20	7 5
Ջակարդի	» 1 34	8 54	Ջակարդի	» 3 7	8 53
Խամաիլիա	մեկ. 1 44	9 4	» 3 17	9 3	
Սիւէշ կայարան	մեկ. 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Տօք (բարափ)	ժամ. —	5 —	» 4 17	9 4	
			Գահիրէ	ժամ. 5 5	10 35